Թէեւ միէ ամենայն տեղ
Խրմել մահուան գառնահամ գեղ,
Խիղճ ունելով մաքուր անմեղ,
Բայց մօտ Հայոց սուրբ սահմանին
Հանգչի իմ մարմին,
Այնտեղ ինձ մահ օրհասական,
Կ'լինի նոր այժ շունչ կենսական,
Աղաչում եմ թոռղ Հայասան,
Ընդունի իմ անշունչ մարմին՝
Ուխտս է այս վերջին.

Օրէորդ Եղիսաբէթ Մօլիսլէան։

Ադրիան.

ՀԱՇԻՒ

Շարունակութիւն տպեց և ծախսոց արարելոց է պէտս շինութեան և վերջանարարութեան ընդարձակեանց Ս. Աստուածածնայ Ամենեկեղեցոյն Հայոց Շամախոյ քաղաքի։

ՄՈՒՏՔ.

	Ր.	Կ.
Յաստիճանաւոր Ջաւատ բէկէ Մարտանեանց նուիրագրեամ	200	
Յաղնուական Մելքոնէ Յովհաննէսեան Միրզայեանց . .	1000	
Վարձ եկեղեցական կրպակի	5	
Սատցաւ Յակոբ Թախտամեանց ի գին վաճառեալ եկեղեցական մանր քարերի	2	
Տոհմական պատուանուն քաղաքացի Պօղոսն Ներսէսեանց լրացուցեալ է պակասորդ ի սեպհականութենէ իւրմէ.	56	55
Ընդամէն գումար մտից	1263	55

ԾԱԽՔ.

Ի գին 278½ հատ զանազան հասարութեան տախտակաց, 22 հատ մաշտաի փայտից և երկու հատ մեծ գերանաց (բրուս)	622	90
Մնացորդ վարձ հիւսն վարպետաց վասն տախտակամածելոյ և կամարակապ շինութեան առաստաղաց և այլ թերութեանց	281	10
Ի գին բևեռաց, երկաթեայ օղակաց ջահից, սկոբկի և կրիչ կանելի վասն դրանց եկեղեցւոյ	89	47

Ի գին 82 թերթ ժեշտի վասն զանգակատան 3½ ֆ. թոկի և մի փութ իւղի	94	62
Ի վարձ ներկելոյ զանգակատան, զրանց, պատուհանաց, որմոց, սեղանոյ և այլն	51	60
Մնացորդ վարձ ծեփելոյ և սպիտակացուցանելոյ, ի գին վառելափայտի վասն գաջ այրելոյ ու շրեշի . . .	56	50
Ի գին վեց փութ և 30 ֆ. իւղի վասն ներկի . . .	54	
Ի վարձ մշակաց վասն զանազան կարևորութեանց . .	13	36
Ընդ ամեն գումար ծախուց է	1263	55

Հոգաբարձուք Պօղոս Հերսէհեան
Յովհաննէս Խաչատուրեան
Դաւիթ Գէորգեան
Խաչատուր Եղազարեան

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՅՑ.

Արարատ ամսագրոյս ԺԵ. շրջանը ահա սկսուում է ներկայ 1882 ամի Յունվարից։

Ուստի խնդրումեմք մեր Գործակալներէն, որ փութան ծանուցանել Տպ. Ժողովոյն «Արարատ»ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշդ հասցէներով։

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի ազգայինք, ինչպէս մինչև ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կիրութեան յառաջկայում և միշտ մի և նոյն զգացմամբք բաժանորդագրուիլ և օգնել սմին։

«Արարատի» թերթից քանակութիւնը, ուղղութիւնը, բովանդակութեանց ծրագիրը և տարեկան բաժանորդագինը մի և նոյն կմնան։

Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովն առաքելով տպեալ անդորրագրեր «Արարատայ» գործակալներին՝ խնդրէ պահանջել բաժանորդներից ապառիկ և ներկայ բաժանորդագներ և տալ անդորրագիր ի միամտութիւն, զրամներն հանդերձ յայտարարութեամբ առաքել ի Սինոդն։ Խնդրէ նաև բաժանորդներից ևս, որ պահանջեն գործակալներից տպեալ անդորրագրեր թէ ապառիկ և թէ ներկայ բաժանորդագնոց վճարման համար։